

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դալարիկ գյուղական համայնքի ղեկավարի

(2015 թվականի 1-ին կիսամյակ)

2015թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում Դալարիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 75 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 281 տեղեկանք, ստացել 60 պաշտոնական նամակ, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

- 2015թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սաննաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները, բազմահարկ շենքերի բակերը, սպորտ-հրապարակի տարածքը, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի, համայնքի վարչական տարածքով անցնող Երևան-Գյումրի մայրուղու և երկաթգծի տարածքները: Կատարվում է աղբահանություն շաբաթը մեկ անգամ և տեղափոխվում համապատասխան վայր:

- Նախագինակոչային տարիքի պատանիներից 19-ը ներկայացել են Արմավիրի Ջինկոն և գարնանային զինակոչը գտնվում է ընթացքի մեջ:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշտագրման աշխատանքներ:

- Կարկտահարության վնասները մասամբ վերականգնելու համար համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և ժողովրդին է բաժանվել տարբեր տեսակի սերմեր՝ նոր ցանքս և սածիլավորում կատարելու համար:

- Համայնքի տարածքում կատարվել է խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքներ և շատ մասերում տեղադրվել է ջրաչափ սարքավորումներ խմելաջրի քլորացման հարցը լուծվում է ժամանակին:

- 2015թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի փաստացի եկամուտները կազմել են՝

ա) հողի հարկ - 800,1 հազար դրամ,

բ) գույքահարկ – 1594,1 հազար դրամ.

- զ) տեղական տուրք – 15,2 հազար դրամ,
 - դ) պաշտոնական դրամաշնորհ – 33771,0 հազար դրամ,
 - ե) այլ ընթացիկ դրամաշնորհ - 420,0 հազար դրամ
 - զ) ընթացիկ սուբվենցիա - 222,3 հազար դրամ,
- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, գյուղապետարանի աշխատակազմը համայնքի ղեկավարի ղեկավարությամբ աջակցել է ծիրանի, աշնանացան ցորենի և գարնանացան գարու բերքահավաքի աշխատանքներին.
- Իրականացվել է ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգման գրունտով հարթեցման աշխատանքներ:
- ա) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, տարեց կանանց, հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին տրվել է դրամական օգնություն 1600,0 հազար դրամ, գույքահարկ է գեղջվել 12 բնակչի 120,0 հազար դրամ:
 - բ) աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 1303,5 հազար դրամ,
 - գ) 6441,6 հազար դրամ ծախսվել է համայնքում նախադպրոցական կրթության հաստատությունում աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:
 - դ) 4336,9 հազար դրամ ծախսվել է համայնքում արտադպրոցական դաստիարակության հաստատությունում (երաժշտական դպրոց) աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:
 - ե) Համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպման համար հատկացվել են 900,0 հազար դրամ:
 - զ) Եղեռնի հարյուրամյա տարելիցին ընդառաջ ձեռք են բերվել տնկիներ 180,0 հազար դրամ և համայնքում կազմակերպվել է ծառատունկ:
- Մշակույթի տունը գործում է, սակայն շենքը վերանորոգման խիստ կարիք ունի:
- Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման:
 - Համայնքի 19 բազմաբնակարանային շենքերի կտուրներն ունեն կապիտալ վերանորոգման խիստ կարիք:

Համայնքի ղեկավար



Պ. Սաղաթեյան